ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
12 դեկտեմբերի 2012 թ. N 68-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2012Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ 17-Ը ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2004թ. հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012թ. դեկտեմբերի 11-ի թիվ 01/15/6523-12 հանձնարարականի՝ մարզի վիճակագրական մարմիններին աջակցություն ցուցաբերելու նպատակով

կ ա ր գ ա դ ր ու մ եմ

1. Ստեղծել անասունների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով.

Ռ.Մելիքջանյան	-	հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ա.Աչինյան	-	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Տավուշի մարզային վարչության պետ
Վ.Սուքոյան	-	Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ
Վ.Աբրահամյան	-	ՀՀ ԳՆ <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների Տավուշի մարզային կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն
Ժ.Թամրազյան	-	ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ
Գ.Վիրաբյան	-	ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ
Ժ.Խաչատրյան	-	ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Ա.Մամյան	-	ՀՀ ԱՎԾ Տավուշի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնարարել հանձնաժողովին /նախագահ Ռ.Մելիքջանյան/ մինչև 2013թ. հունվարի 17-ը մարզում անցկացնել անասունների հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:
3. Համայնքների ղեկավարներին՝ ստեղծել անասունների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին:
4. Կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ռ.Մելիքջանյանի վրա:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 12
Իջևան